ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «05» 02 2025թ.

ՀՐԱՄԱՆ N 69/1-Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Կադաստրի կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության փորձագետի ծրագիրը՝ համակարգում իրականացվող բարեփոխումների շարունակականությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով, համաձայն հավելվածի:

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393

Հավելված 1
Կադաստրի կոմիտեի ղեկավարի
«05» 02 2025 թ.
N 69/1 -Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 749-Լ որոշմամբ հաստատված Կադաստրի կոմիտեի կանոնադրությամբ՝ կոմիտեին է վերապահված անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումն ու կադաստրի համակարգի գործունեության ապահովման լիազորությունը: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ՝ Կադաստրի կոմիտեին է վերապահված անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով կառուցվածքային բարեփոխումների իրականացման միջոցառումը: ՀՀ կառավարության 2021-2026 ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում նախատեսվում է սպասարկման գրասենյակների օպտիմալացում՝ ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման, օպերատորների (համայնքներ, «Հայփոստ» ՓԲԸ և այլն) կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և աշխարհագրության ընդլայնման, ինչպես նաև օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնների ստեղծում: Կադաստրի կոմիտեի համակարգում իրականացվող բարեփոխումների շարունակականությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով նախատեսվում են իրականացնել կառուցվածքային փոփոխություններ՝ գրանցման միասնական ստորաբաժանման ստեղծման, սպասարկման գրասենյակների և տարածքային (մարզային) ստորաբաժանումների գործունեության դադարեցման և նոր խորհրդատվական կենտրոնների ստեղծման միջոցով:

Վերոնշյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտություն է առաջացել ***Կադաստրի կոմիտեում կանոնադրական խնդիրներից բխող որոշակի ժամկետով ծրագրի իրականացման դեպքով ներգրավել փորձագետ:***

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար փորձագետ ներգրավվում է **1** /մեկ/ տարի ժամկետով:

3. Ակնկալվող արդյունքը

Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- Կադաստրի կոմիտեում նոր ստեղծվող գրանցման միասնական ստորաբաժանման, նոր ստեղծված «Սյունիք», «Շիրակ», «Լոռի» խորհրդատվական կենտրոնների քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատում և դասակարգում,
- նոր ստեղծվող գրանցման միասնական ստորաբաժանման, նոր ստեղծված «Սյունիք», «Շիրակ», «Լոռի» խորհրդատվական կենտրոնների, գործունեությունը դադարեցրած սպասարկման գրասենյակների քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի առաջարկության և պաշտոնների անձնագրերի նախագծերի մշակում,
- Կադաստրի կոմիտեում նոր ստեղծվող գրանցման միասնական ստորաբաժանման, նոր ստեղծված «Սյունիք», «Շիրակ», «Լոռի» խորհրդատվական կենտրոնների հաստիքների համալրում:

4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը՝

Փորձագետը սույն ծրագրով հանձնարարված աշխատանքների վերաբերյալ վեց ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, անմիջական

ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք են հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները: Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6.Փորձագետին ներկայացվող պահանջները

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- կադրերի և մասնագիտական կողմնորոշման բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: